

ՀԱՐՍԻԿԸ

Արփիկ երեխա էր թեն, կզգար, որ քանի օրե ի վեր իրենց տան մեջ բան մը կըլլար:

Սողիկ մամը կուլար միշտ: Մարգար պապը, հորեղբայրները կբարկանային անոր: Մեծ հորեղբորը կինը, որ իր մեծ հարսիկը կըլլար, թեն իրեն բան չէր ըսեր, կնեղանար Պեկոյին, Աղային, Աղվորին, երբ անոնք իրար կանցնեին, կխնդային, կվազեին մեկզմեկու ետևէ՝ տան մեջ. «Հայտի, գացեք դուրս, մի՛ պլլվիք մարդուն ոտքերուն», կասատեր, Պզտիկ հարսիկը, երբ Գոգորին ծիծ կուտար, ու ան, քիչ մը ծծելէն հետո՝ ծիծը բերանը կառներ ու ալ չէր քաշեր՝ «Ամա՛ն, տղա՛, պիտի ծծես նը՝ ծծե՛սիրտս մի՛ հատցներ», և կամ՝ քնացնելու համար, երբ երեսձածուկով կգոցեր դեմքը ու՝ կօրեր ու կօրեր, ու երբ ան չէր քնանար, կբանար որ՝ արթուն էր, աչքերը բաց կնայեր իրեն. «Ի՞նչ կուզես ըրե, կուզես քնացիր, կուզես մի՛ քնանար, ես մինչև ետքը քեզ չիպիտի օրեմ» կգոչեր, ու օրոցքը կձգեր, կհեռանար:

Իսկ ամենէն ավելի իր մորը՝ իր հարսիկին բան մը եղած էր: Խոտհունձի ամիս էր. գիշեր կըլլար, հորեղբայրները, մյուս հարսիկները տուն կուգային մանգաղները, փայտե մատնոցները ձեռքերնին: Իր հարսիկը ամենէն ետքը, մինակը ներս կմտներ, քրտնած դեմքով, ձեռքերը խոտ քաղելէն բրտացած, հագուստները խոտ հոտելով: Ան մարդու հետ չէր խոսեր, կլեր: Ու կարծես՝ տունով քեն ըրեր էին հետը, ոչ իսկ բան մը կհարցնեին: Պատժվածի մը կեցվածքը ուներ ան իրենց մեջ: Տնեցի ալ չէին նկատեր զայն այլևս:

Բան բանեցնել չէին տար: Սեղանը մեծ հարսիկը կդներ ու կվերցներ, ամանները պզտիկ հարսիկը կհավաքեր ու կլվար: Թորոն ալ, որ իր մեծ եղբայրն էր ու մեծ տղա էր՝ չէր սիրեր հարսիկը, թեն անոր ալ մայրն էր: «Ան իմ հարսիկս չէ, ես հարսիկ չունիմ», կպոռար:

Արփիկ չէր հասկնար այս ամենուն պատճառը, թե ինչու իր հարսիկին հետ չէին խոսեր պապը, մամը: Թորոն ինչու՝ կըսեր, թե՛ ես հարսիկ չունիմ: Մինչև հիմա իր ու Թորոյին մայրը ան էր, հիմա ինչո՞ւ չէր:

Արփիկ շատ կսիրեր իր հարսիկը, որ իրեն պես գեղին ամենէն սևահոններէն էր: Ան ալ զինքը շատ կսիրեր: Տեղ մը երթար, բան մը առներ, բերեր, այգիներէն գար, ինչ պտուղ ունենար, էնթարիին գրպանը, գոտին կպահեր ու իրեն կուտար: Թորոյին ալ, հորեղբայրներուն տողոցը Պեկոյին, Աղային, Աղվորին ալ կուտար, բայց ամենէն շատը իրեն կուտար ու հաճախ՝ մյուսներէն գաղտնի: Կապույտ ուլուններէն ծոցիկ կշիներ իրեն ու կկախեր վիզէն, ականջներուն օղ կդներ, գլխին թաղնիկ կհյուսեր: Գիշերները իր անկողինը իր թներուն մեջ կառներ ու կպառկեցներ: Ո՛չ, ինք շատ կախորժեր անկէ: Մամը, պապը ամենքն ալ կսիրէին զինքը, բայց իր հարսիկը ուրիշ էր: Ու թեն պզտիկ էր, ու խելքը չէր հասներ, կմեղքնար հիմա՝ նայելով իր հարսիկին, որուն հետ մարդ չէր խոսեր:

* * *

Վարդավառը կմոտենար, երկու շաբաթ կար ու չկար, Պիտի պառկեին-
ելլեին, պիտի պառկեին-ելլեին, պահքի շաբաթը պիտի ըլլար, անկե
ետքը նորեն՝ պիտի պառկեին-ելլեին, երկուշաբթի, նորեն պիտի պառկեին-
ելլեին, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, ու մեկ մըն
ալ Վարդավառ...

Բոլոր պզտիկներուն պես՝ Արփիկն ալ կխայտար ուրախութենէն:
Կպարծենար ամենուն, որ իր հարսիկն ալ ուխտ պիտի տաներ զինքը: Իրեն
նոր, թեթևուկ, աղվորիկ տրեխներ պիտի կարեր ու հագցներ, իրենց, հերոս
ուր է՝ մորթեր էին, երինջին կաշիէն: Պիտի շալկեր զինքը: Ոչ, մինչև վերջը
չպիտի շալկեր, ինք կրնար քալել, բայց երբ հոգներ, այն ատեն պիտի շալկեր:
Ինքն ալ իր թևերովը հարսիկին վիզը պիտի գրկեր, անոր սև ու երկայն
ծամերը պիտի բռներ: Իր հարսիկը մեծ էր և ուժով: Ու անոր շալակէն չորս
դին նայելով, պիտի երթային Վարդավառին լեռը:

Արփիկ շատ կախորժեր տեղ տեսնելէն: Ուրիշ անգամ ալ գացեր էր, ու
կհիշեր, թե մատուռը ո՛ր էր: Հեռու, շատ հեռու, այնպէ՛ս հեռու, որ... պիտի
երթային, պիտի երթային, պիտի երթային ցան արտերուն ճամբէն, անկե
ետքը՝ նեղ տեղէ մը պիտի անցնէին, լեռ մը պիտի ելլէին: Ետքն ալ՝ գեղ մը
պիտի տեսնէին, պիտի իջնային ու գեղին մեջէն, պարտեզներուն քովէն
պիտի անցնէին:

Կանանչ տեղ մը էշեր, քուռակներ, պզտիկ աղվորիկ քուռակներ
կարծէին, մարդ չկար քովերնին, իրենք իրենց: Հոնկէ ալ պիտի անցնէն,
ու ահա՝ Վարդավառի լեռը... Հոն պիտի ելլէին... Տափարակ տեղ մը:
Դեղջուրի ձորին վրա, ուր է՝ տեղ մը կա, այնպէս տեղ մը, հոն էր ուխտը,
ճերմակ, պտըտիկ տան մը պէս էր մատուռը: Բոլորտիքը շատ մը ծառեր
կային, ուր է՝ Ս. Գևորգի ուխտին չորս բոլորը ծառեր կան, անոնց պէս:
Մեկ կողմն ալ խորան-աղբյուրին պէս աղբյուր մը, ջուրը շառ-շառ կվազէ
գուռը: Ուխտէն շատ վար, ու անոր դիմացը կիյնար, Արփիկ գիտեր որ գետ
մը կար, մեկ մըն էր, որ երկուքի կբաժնվէր, երկու հատ կըլլար, մեջտեղը
նեղ, շատ նեղ ցամաքով մը. այդ ավագուտ երիզին վրա երկու այրած ծառեր
կային: Արփիկին անոնք մարդ կերևային, իրավցնէ երկու մարդ, որոնք կեցեր
էին հող ու զարմացած կնայէին վագրին: Դեմն ալ լեռ մը կար, որ պեռշիկ
եզին չէ, կարմիր եզին պէս կարմիր հող մը ունէր: Լեռը այնպէս մեծ էր ու
բարձր կերևեր, որ Արփիկ կվախնար շատ նայելու անոր: Դներ,
սատանաներ, շվոտներ կային, կարծես, գագաթի ծառերուն ու ձորերուն մեջ,
տեսեր էին տղաքը: Տեղ մըն ալ հայելի մը կար, այնպէ՛ս լույսեր կարձակեր:

Բայց հիմա, քանի օրե ի վեր, տան մեջ ամենքը տխուր էին, իր հարսիկին հետ խռով էին, ու ուխտի երթալու վրա չէին խոսեր:

Առտու մըն ալ Արփիկ արթնցավ որ՝ լուսեր էր: Մինակ էր անկողինին մեջ, հարսիկը չկար քովը: Ականջ տվավ որ՝ դուրսի դուռեն շատ ձայներ կուգային: Մամն էր, պապը, հորեղբայրները, հետո պապուն քույրը, մեծ հորքուր մամը, քովի տունեն Սերոյին մայրը, Ակոյին մայրը՝ Նենեն: Զարմացավ, որ խոտ քաղել չէին գացեր անոնք այդ օրը, ու իրենց տունն էին հավաքվեր: Ի՞նչ կար արդյոք: Բոլորն ալ բարձր ձայնով կխոսեին: Սողիկ մամը կուլար:

– Գիշերով ելավ գնաց: Ա՛լ չպիտի գար Դշխուին տունը գնաց, հոնկե պիտի առնեն ու տանին, – կըսեր մամը հեկեկալով:

– Թող կորովի երթա, դժոխքը տեսնեմ, անոր երեսը չտեսնեմ կպոռար պապը:

– Կնիկմարդ, լալով, լալով աչքերդ սև ջո՞ւր պիտի իջեցնես, ադ տարիքիդ մեջ ցավի տե՛ր ալ պիտի ըլլաս: Ան որ միտքը դրեր է, տղաքը կձգե ու կերթա, գոռո՞վ պիտի պահես: Էրիկ կուգե, ի՞նչ պիտի ընես, – կնեղանար հորքուր մամը:

– Անթառանը խրատեց, ան համոզեց, – կըսեր Ակոյին մայրը:

– Ո՛վ կխրատե, թող խրատե, – կպոռար Մկըրչ հորեղբայրը, – ճեհեննեմին տակը թող երթա, մենք մեր լուսեղծի աղբորը երկու զավակները, հարկավ, կընանք մեծցնել:

Մամը կշարունակեր ողբալ ու եղանակել.

– Կենճ արևդ առիր, գացիր ու պառկեցար հողին տակը: Վեր ելլեիր ու տեսնեիր՝ էլի՛ն աղջիկը, չուլի՛ն աղջիկը ինտո՞ր տղաքդ ձգեր է, ելեր է ու կերթա:

Արփիկ չէր հասկնար, թե մամը որո՞ւ վրա կխոսեր ու կուլար, թե ո՞վ էր գացեր ու ալ չպիտի գար:

Պզտիկ հարսիկը ներս մտավ հանկարծ ու, տեսնելով, որ արթուն է, խանդաղատանքով.

– Արթնցե՛ր ես, Արփիկ, – ըսավ, – պզտիկ հարսիկը քուլա ըլլա քեզի: Ելիր, որ հաց տամ՝ ուտես: Պեկոն ալ ելավ, Գոգորն ալ ելավ, հայտի՛, դուն ալ ելիր:

Արփիկ ելավ: Պզտիկ հարսիկը ջուր լեցուց, Արփիկը զարկավ երեսներուն և լվացվեցավ:

Պզտիկ հարսիկը հագվեցուց զինքը: Դուրսի տունը նստեր էին մեծ մամերը: Անոնք փայփայեցին, համբուրեցին զինքը, ու Արփիկ ամչնալեն՝ վար նայեցավ:

Եփած կաթ դրին գետինը, փողցին վրա, առանց շաքարի, մեջն ալ հաց բրդեցին: Տղաքը նստան փողցին շուրջը, Արփիկն ալ անոնց պես նստավ, բոլորն ալ կերան, կշտացան: Հետո հաց ու ընկույզ դրին կապոցի մը մեջ,

Պեկոյին շալակը կապեցին, Արփիկին ալ տրեխներ հագցուցին, պատվիրեցին, որ ցերեկին տուն չգան, ու մինչև իրիկուն խաղան:

Տղաքը արտերուն բոլորտիքի բլուրները գացին ու խաղցան, մինչև կոչնակը զարկին, հետո, հոգնած, տուն դարձան:

Արփիկ կարծեց, թե իր հարսիկ պիտի գար ամեն օրվան պես, բայց այդ իրիկունը, առաջին անգամ ըլլալով, ան չեկավ: Մութը կոխեց, սեղան դրին, ճաշեցին, նորեն չեկավ, Գոգորը պառկեցուցին: Տղաքն ալ գացին պառկեցան, ու Արփիկը տրտմեցավ: Ու երբ պզտիկ հարսիկը հանվեցուց զինքը, ու ըսավ թե իր անկողինը, իրեն հետ պիտի պառկեր, բրցուց լացը: Ո՛չ, իր հարսիկը կուգեր, միայն ան: Ուրիշին հետ չէր պառկեր: Մամը, պապը, հորեղբայրներն ու հարսիկները ջանացին հանդարտեցնել, թե իր հարսիկը հեռու տեղ գացեր էր, այդ զիշեր չպիտի գար: Ան չհամոզվեցավ, ու լացավ, լացավ: Ուշ ատեն քունը տարավ:

Շաջորդ գիշեր նորեն իր հարսիկը չեկավ հեռու տեղեն: Ու ոչ ալ անկե ետքը: Արփիկ ամեն օր կհարցներ ու կսպասեր: Վերջապես՝ իրեն հայտնեցին, թե ալ չպիտի գար: Այդ օրը ամենեն շատ լացավ, բայց անկե ետքը վարժվեցավ, ու պզտիկ հարսիկին հետ անոր անկողինը պառկեցավ:

Վարդավառը եկավ: Գեղով ուխտ գացին, իրենք չգացին: Իրեն ըսին, թե եկող տարի ամենքը միասին պիտի երթային, ջորիին վրա պիտի նստեցնեին զինքը, ինչէ՛ր, ինչէ՛ր պիտի տանեին հետերնին: Ու Արփիկ ալ չտրտմեցավ:

* * *

Անցավ տարի մը, երկրորդ ամառ մը եկավ:

Թորոն այլևս բերանը անգամ չէր առներ իր մոր անունը, ու եթե ակնարկություն ըլլար՝ կհայիոյեր անոր հասցեին: Արփիկն ալ փոխվեր էր: Ան ալ ոչ միայն չէր կարեկցեր, չէր սիրեր, այլ կատեր իր մորը, որ ձգեր էր զինքը ու գացեր էր, ու պզտիկ հարսիկը իր մայրը կնկատեր:

Նորեն խոտհունձքի ամիսն էր:

Գոգորը ծիծե կտրեր էին, ու տունը կթողեին, մամուն քովը: Հորեղբայրներն ու Թորոն, ճերմակ լաթեր հագած, ճերմակ թաղիքներ դրած, եզները կլծեին ու հերկը կերթային: Տղաքը՝ Պեկոն, Ադան, Աղվորը տրեխներ կհագնեին ամեն առտու: Մեծ հարսիկը երախա մը բերեր էր այդ տարի: Նորածինն ալ հետերնին կառնեին, ու ամենքը միասին արոս արտերը, ձորերը կերթային՝ խոտ քաղելու: Տղաքը հարսիկներուն պես քաղող չէին, բայց նորեն կօծանդակեին, ինչքան քաղեին՝ շահ մըն էր: Արփիկին ալ տրեխներ կհագնեին, ու իրենց հետ կտանեին: Տունը մնար՝ ի՞նչ պիտի ըներ: Նորածինին օրոցքը կօրեր, որ քնանար, արթննալու, լալու որ ըլլար, մեծ հարսիկը կկանչեր, որ գար ծիծ տար, պարանները կտաներ, որ քաղված խոտին խորոմներեն վանդակ կապեին, բեռ շինեին:

Օր մըն ալ, ձորի մը շուրթը, արոս արտ մը գացեր էին նորեն: Հարսիկները կքաղեին վայրի առվույտները, տղաքն ալ իրենց մայրերուն հետ ու անոնց կարգին ծռեր՝ նույնպես կքաղեին, իսկ Արփիկը մինակ նստեր էր օրոցքին մոտ, տաք արևին մեջ ու կխաղար ինքն իրեն: Արտին մեջ կորիճնա վայրի սիսեռ շատ կար: Փետտեր էր կորիճնաներուն կապույտ ու մանիշակ կոճակները, դերձանի վրա շարեր, ծոցիկ, ապարանջան, օղ շիներ էր, կախեր էր վիզեն, ականջներեն, դաստակներեն: Միսեռներուն ալ կանաչ փեճիկները բացեր՝ թարթիչներուն բռնել տվեր էր: Խոտով, ծաղիկով աղջնակ մը, վիճակի աղջնակ մը դարձեր էր, ու կանաչ սիսեռե աչուկներով շուրջը կնայեր ու ինքն ալ կհրճվեր:

Հանկարծ ձորեն պզտիկ հարսիկին ձայնը լսեց: Ջինքը կկանչեր: Արփիկ վազեց, սիսեռները աչքերուն: Ձորին մեջ կին մը պզտիկ հարսիկին հետ կխոսեր. երկայն, ոլորված պեխերով մարդ մըն ալ՝ բացը կայներ էր: Արփիկ վար իջավ ու մեկ անգամեն՝ ճանչցավ: Պզտիկ հարսիկին հետ խոսող սևահոն կինը իր մայրն էր:

Արփիկ կեցավ: Չշարժեցավ:

– Արփիկ, եկուր նայիմ, եկուր քովս, պագնեմ քեզ մեկ մը, աչքիս լուսը, ըսավ հարսիկը, որ տեսնելու եկեր էր զինքը:

Արփիկ չպատասխանեց, փախավ:

Պզտիկ հարսիկը վազեց ետենն ու բռնեց, իր հարսիկին տանելու համար, բայց Արփիկ ճշաց որքան ձայն ուներ, մերժեց երթալ, ու ազատվելով, նորեն փախավ:

Անկարելի եղավ համոզել:

Հարսիկը քիչ մը ալ կայնեցավ, ու ոլորուն պեխերով մարդուն հետ հեռացան:

– Արփիկ, ինչո՞ւ չգացիր քովը, քու հարսիկդ էր նը, քեզ կարոտցեր էր, – ըսավ պզտիկ հարսիկը, Արփիկին քով գալով:

Արփիկ գլուխը կախած վար կնայեր: Ու ուսերը ցնցեց: